մերժել նոր պայմանները: Խօսքը նորից անցաւ զէնքին: Նոյեմբեր 11–ին վերսկսուեց պատերազմը, որը, սակայն, տևեց շատ կարճ: Նոյեմբեր 14–ին Թիւրքերը յարձակուեցին Ջաջուռի մեր զօրամասի վրա: Կռիւները սկզբում նպաստաւոր էին մեզ համար, բայց թշնամուն յաջողուեց թիկունքային շարժումով ոմբակոծել Ղալթախչին, ուր գտնուում էր զօրամասի կենտրոնը, և սպառնալ երկաթուղագծին: Այդ պատճառով մեր զօրքերը նահանջեցին Համամլու: Տաք կռիւներ տեղի ունեցան և Աղինի ճակատում, ուր ծանր վիրաւորուեցին Սմբատը և Նիկոլ Օգարաչեանը: Թիւրքերին յաջողուեց այստեղից էլ յետ մղել մերոնց: Վերջին կռիւներն էին սրանք:

Հայաստանի կառավարութեան դիմումի վրա կնքուեց նոր զինադադար և նոյ. 22–ից թիւրքերին յանձնուեց նրանց պահանջածը: Հայաստանի կառավարութիւնը միաժամանակ դիմեց և Մոսկուայի միջնորդութեան: Չիչերինը դրական պատասխան տուեց և իր կողմից նշանակեց Բուդու Մգիւանիին մասնակցելու համար հայ–թիւրքական բանակցութիւններին: Միաժամանակ, Թիֆլիս ուղարկուեց Ա. Խատիսեանը՝ դիմելու համար դաշնակից ներկայացուցիչներին: Խատիսեանը Երևանից մեկնեց նոյեմբեր 18–ին և հետը տարաւ զինուորական նախարարի կազմած հետևեալ տեղեկագիրը.

«Հայաստանը ունի չորս ճակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում — Կարս—Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան—Ղազախ:

Ինչպէ՞ս են բաժանուած դրանց մէջ Հայաստանի զինուորական ուժերը: Կարս—Ալեքսանդրապոլի ճակատում կանգնած են հետևեալ զօրամասերը. խօսքը վերաբերում է կանոնաւոր զօրքերին և, յատկապէս, հեծելազօրքերին: Այդտեղ են առաջին գունդը (Մազմանեան) — 1500 ուին, 4րդ գունդը (Միրիմանեան) — 2000 ուին, 5րդ գունդը (Շաղուբաղեան) — 700 ուին, 6րդ գնդի մի բատալիոն — 700 ուին, 7րդ գնդի մի բատալիոն (Իշխանեան—Գնդունի) — 800 ուին և 8րդ գունդը (Տիգր. Բաղդասարեան) — 1500 ուին, ընդամենը՝ 7,200 ուին: Բացի դրանից կան նաև Սմբատի խմբերը:

Սուրմալուի ճակատում (Դրօի մօտ) կան՝ 9րդ գունդը — 2000 ուին, 8րդ գունդը (1 բատալիոն) — 1000 ուին և 7րդ գունդը (մի բատալիոն)—700 ուին, Ղարաբաղի առանձին զօրամասը (Կուռո) — 800 ուին, ընդամենը՝ 4500 ուին և փոքրիկ եղիդական զօրամաս:

Նախիջևանի ուղղութեամբ կանգնած են՝ 3րդ գունդը — 2000 ուին, 2րդ գունդը (երկու բատալիոն) — 1000 ուին, ընդամենը՝ 3000 ուին:

Դիլիջան—Ղազախի ճակատում գտնուում է 6րդ գունդը (Մանիևի)— 2000 ուին:

Այս թուերի մէջ չեն մտնում հեծելազօրքը, հրետանին և յատուկ նպատակ ունեցող մասերը, ինչպէս սապերներն և հեռադրական ջոկատները:

Այսպիսով, բոլոր չորս ուղղութիւնների վրա մենք ունենք ընդամենը 16,700 ուին, բացի դրանից, Զանգեզուրում գտնուում է 800 ուին, ուրեմն, վերոյիշեալի հետ՝ 17,500 ուին:

Երևանում պահեստում մնում է 10րդ գունդը (Հալապեանի) — 1500 ուին, ընդամենը, ուրեմն, 19,000 ուին: